[280126]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» դեկտեմբեր 2017թ. N 173-Ա/1

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացությունը՝ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հավաստագրել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «բ»

պարբերության՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում:

2. Հանձնաժողովին՝ ապահովել սույն հրամանը եռօրյա ժամկետում հիմնադրամին առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով հիմնադրամի տրամադրած հասցեով ուղարկելը:

ԱՍԱՏՐՅԱՆ